Ա.Բ.-ով

Սիրուհի.
Անգիտ թրուցը
Բաք. 1924թ.

891.99
Ս-15

ԱԲՈՎ

19 NOV 2010
13 MAY 2005
891.99
Ա-15 սպ.
Հ.Ա.
1006/29166

ՅԵԴԻՆԻ ՖՐՈՆՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԳԻՏԿԱ

ՄՈՍԿՎԱ 1924

16777

.01. 2013

Главлит № 22603

Типография Госиздата С. С. Р. Армении

Тип... Москва.

ՅԵԴԻՆԻ ՖՐՈՆՏ

Ա.ԳԻՏԿԱ

Հոկտեմբերը բերող
ուսերի՛ հանդեպ
հոկտեմբերի բե՛ռը՝
ծա՛նր է դարձել.

Հոկտեմբերյան յերկրի
բանվո՛ր,
գյուղացի՛,
դո՛ւք,
Հոկտեմբերի դե՛ը
հաստա՛տ իմացեք։

Հոկտեմբերը
յերկո՛ւ
ֆրո՛նտ է բացել—
ցուցյերին՝
[illegible] ն էլ հարվածե՛ք.

Սեպտեմբեր —

պարա՛բտ իր փորով...

Մե՛կը—
բարձրացող
նեպա՛չը
մեզ մոտ...

ՖՐԱՆՏ ԱՌԱՋԻՆ

—«Սը-Խը-Հը-Մը՞» յերկիր,
«քո ձե՞ռքը—տո՛ւր,
«քո ձե՞ռքը—տո՛ւր»...
Հընչո՛ւմ է կո՛չն այս
թընդում է խո՛ւլ.
Բեռլինո՛ւմ,
Հրոմո՛ւմ,
Լոնդոնո՛ւմ,
բանվորնե՛ր—ձեռքե՛ր կառկառուն
ձրգվո՛ւմ են,
խընդրո՛ւմ.
«քո ձե՞ռքը—տո՛ւր,
«քո ձե՞ռքը—տո՛ւր...»

...Ու բողոքո՛ւմ այս
աղիողո՛րմ—
Յեվրոպա՛ն—

պառա՛վ
չո՛ր վոտներով—
կարծես թե՝ փո՛ր մի—
ճարպագո՛ւնդ.
փո՛ր մի,
վոր լի՛ է
գործարանո՛վ
գանգո՛վ,
զարկո՛վ ու
ձեռքերո՛վ,
վորոնք կանչում են.
«Սը՞-Խը՞-Հը՞-Մը՞»...
Պատռո՛ւմ են պառավ աղի՛ք
ու կո՛ղ...

Յեվրոպա՛ն—
պառավ իր վոտներով—
չոքել է կողքի՛ն մեր դըռան—
մի ծո՛ւնկը
դըրել է Տաճկաստան,
մի ծո՛ւնկը
ձըգել է Արխանգելսկ,
հենե՛լ է ձեռքերը
Հրոո՛մ,
Լոնդո՛ն,

ու վորպես—
քարաղի՛ն կարոտ—
մի կո՛վ—
դարձնում է լեզուն՝
Լոնդոն—
լիզում Լոնդոն,
դարձնում է լեզուն
Իտա՛լյա—
լիզում է Հռո՛մ,
ու ճըպռոտ ա՛չքը
մոնոկլո՛վ
ուղղո՛ւմ է
դեպի՛
Սո՛վ-
նա՛ը-
կո՛մ...

Կողքերի՛ց՝
անթի՛վ դեմոկրատ—
կապո՛ւմ,
կապո՛ւմ են լեղապատառ...
Կապո՛ւմ են—
փո՛րն իր,
բինտերո՛վ...
Կապո՛ւմ են փո՛ըը—

չը պայթի՛...



Ահա թե ինչու
դե յուրե՛
մեզ «ճանաչո՛ւմ» են
նըվիրել։

—

Բայց յերբեք,
ֆրո՛ն այս
չը լըքեք։—
Ամեն մի ցուցցի
տոնի առթիվ
ֆրոնտո՛ւմ այս

ո՛ւժը
յերկուսեք։
Մեզ միայն տրա՛կտորն է հարկավոր,
մեզ միայն պետք է
մեքենա՛։
Կարող են,
այդքանը թող մեզ տա՛ն։
—
Վիրն է—
յելքը։
Վիրն է—
ուղին։
Վիրն է—
գերավը հաղթողի...

Վո՛չ մի գերավ
չունի Յեվրոպան։
Յեվրոպան պառա՛վ։
չունի
վո՛չ մի գերավ։

Ահա՛,—
Կոմինտե՛ռնը,
կո՛ւռ է,
կանգո՛ւն։
Մոսկովից ձեռքերը մեկնել է
աշխարհիս ամե՛ն մի անկյուն։
ու վորպես

հուժկու
դիրիժոր—
շարժում է ժի՛ր իր ձեռքե՛ր։
վոր Յեվրոպայի
գոռո՛ւն բողոքը
համաչա՛փ հընչի,
զարկի համաչա՛փ,
ու բերի
պատռումը պառա՛վ կողերի։

Իսկ Յեվրոպան կապող
ամե՛ն դեմոկրատ
ուզո՛ւմ է—
ճրպռոտ մոնո՛կլը
դառնա իր կողմը,
ճրպռոտ մոնո՛կլը
ժրպտա իրե՛ն—
փոխադարձ նախանձն է
նրրանց
տիրե՛լ։

Յեվ ահա...
Բինտերը կապո՛ւմ են,
փաթաթո՛ւմ ամուր—
բայց ըշտա՛պ,
իրարո՛ւ դեմ

ձուլում
թընդանո՛թ...

Յեվ պայթի՛ պիտի
պատերազմը կըրկին...
Ահա՛,
դիմում են դե՛մ իրարու,
ահա՛
թողնում են բինտերը
թուլ,
ահա,
թողնում են բինտերը
բաց...

Ահա՛, —
Կոմինտերնը
քանդո՛ւմ է բինտերը.
ահա,
Կոմինտերնը դիրիժո՛ր իբրեվ
շարժում է ձեռքերն իր
ուժգի՛ն։
Պայթում է փորն այդ
դո՛ւրս.
պայթում է Յեվրոպա՛ն
վորպես ռո՛ւմբ։

Ու փորից ցըրվում են
ամենո՛ւր
բան-վոր-ներ...



Լո՛ւռ, —
Լըսե՛ք.
բերում են ուժ —

Սը-Խը-Հը-Մը՛-ն մեր
կըդառնա
կո՛ւռ։
Սը-Խը-Հը-Մը-ն մեր
աժդահա
դուռ,
վորով կանցնենք մենք
առողջ մարդուն։
Դո՛ւռն այդ—
ամո՛ւր է,
հաստա՛տ.
դռան բանալի՛ն է
Մասկվա՛ն։

ՖՐՈՆՏ ՑԵՐԿՐՈՐԴ

ՏԸԶՐՈՒԿ ՆԵՊԱՉԸ ԽԱՆԳԱՐՈՂ

Իսկ ներսում,
տես,
Նեպաչի վորկորը

յերնում մեր դեմ—
Նեպաչի վորկո՛րը—
կո՛ւլ կըտա,
կո՛ւլ—
թե հոկտեմբերը,
թե քեզ
բանվո՛ր...

Նեպա՛չը—
միջնորդ անբարեխիղճ.
Նեպա՛չը—
տրզրո՛ւկ անդընջում.
Նեպա՛չը—
մա՛շկը մեր կըռծում—
ուզում է ծըծել
Սը՛-Խը՛-Հը՛-Մը՛-ն։

Ինքն ամեն տե՛ղ է—
ինքը չըկա.
գիտե՛ նա՝
դիտո՛ւմ է իրեն
Զե-կա՛ն...

—

Արգելքն
ինչքա՛ն էլ
առաջն

առնի—
Տըզրուկը գըտնո՛ւմ է իր ճամբան։
Թագո՛ւն մըտնում է Ժողտընտխորհ,
սողո՛ւմ է,
մըտնում է հազա՛ր մի տրեստ,
նըստում է վըզին մի «ընկերո՛ջ»,



յերբեմն
անգամ «կոմունիստ»։
ծըծում է տրեստ ու Ժողտնտխորհ,
ծըծո՛ւմ է Տըզրուկը
տըռզո՛ւմ,

...ուչո՛ւմ,
մինչեվ վոր—զո՛հն իր
ց թըռչո՛ւմ,
...ում է՝ ուղղիչ տըներ շըրջի...

—

...ռայո՛ղ ընկեր,
լամ բարեկա՛մ,
Ո՞ ...ուկից ըզդո՛ւշ մընացեք,
...ւեք ձեր վիզը,
ամեն անգամ —
ցանցեք ձեր շուրջը
Տըզրուկից։

—

Իբրեվ իր հաստատ
թե՛վ, թիկունք—
Տըզրուկն ունի բո՛լ
տըզրաճուտ —
քանդում են քաղա՛ք,
փորում՛ են գյուղ։—
Սըրանց փեշա՛կն է
«չարչություն»։

Գնա՛ծը,—
վոնց վոր պատվով ագենտ—
ղըրկում են քաղաք,

Տըզրուկ պապին,
վոր պապը տրեստի յախե՛ն կապի։

Այսպե՛ս ել,
տրեստի՛ց
ապրանքն ելնու՛մ,
տըզզալով հասնում է ես պապին
պապն ել,
ապրանքը վագոն բեռնում,
ճամբում է ճուտին,
վոր ծախի։

Ճուտն այնտեղ

ընկնում է
ափալ-թափալ,
ծըծում է չերվո՛նեց,
ծըծում քըրտինք,
վոր գընի՝ կընկանը
«ալմաստ մատնիք»։

Կընիկն ել,
ոձի՝,
ճարտա՛ր լեզվով
բաղմում է ուսին իր մարդու,

1006
29 ԽԵ

Կոշի՛կն իսկ
ուզում է վոսկո՛վ զարդել...
Ի՞նչ նըրանց գործն է,

վոր այդ կարգով
կըտուժեն
գյուղացի
ու բանվո՛ր։

Նրանք մրոտածո՛ւմ են.
մի որ
գուցե,
կը դառնան իրենք
հարուստ առզե՛ր։
Տըզրուկի ուզածն է
ուռած մի վոր,
վորպե՛սզի
կազմի նա
յեղի՛նի ֆրոնտ,
վորպե՛սզի,
Յեվրոպա՛ն—
պառա՛վ վորկոր—
կու՛լ տա,
Կոմինտերն
Զեկա,
Խորհուրդ.

—

Կա՞ ազատում մեզ,
կա՞ աքդյոք դուռ—
Ի հա՛րկե.

Լե՛նին է ասել—
— Մրրցո՛ւմ...
Լենինը ասել է.
— Ցեղեք տոկո՛ւն։

Կրձուլենք տրեստը գյուղերին,
կրձուլենք գյուղերը տրեստին.
կըցրենք ցանցերը սպառնախանութի
միջնորդի դերը կըչքվի՛.
նեպաչը,
չարչին,
կըչքվին,
կըմնան անգործ,
անոթի...
Նեպաչը,
չարչին,
ուզեն—չուզեն
կըդառնան բանվոր,
կամ ծառայող։

Յեվ նըրանց համար
մեր պետության
վոչը կըլնի վոչ—
այո՝ այո,
քանի վոր ունենք մենք

բանգյուղտեսուչ,
քանի վոր ունենք
կոմ—
արհմիությո՛ւն։

—

Սը-Խը-Հը-Մը յերկրի
բանվոր,
գյուղացի,
մբրցումի լոզունգն այս
չբթողնե՛նք անգործ,
չընձուլվե՛ք նեպի փըչակամ ճարպուն։
Մաքառեք տոկո՛ւն։
Մըտածե՛ք։
Մըրցե՛ք։
Ցեղե՛ք գիտակի՛ց։
Վորպեսզի,
սերունդները գալիք,
չբթըքեն ձեր մեռած ճակատին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0321223

16.777